

XI-դասարան - պատասխաններ

1.Գրիգոր Չոհրապին մեծարել են «Նորավեպի իշխան» պատվանունով: Չոհրապի ստեղծագործության հետ կարող ենք համեմատել Մոպասանի, Օ ' Հենրիի, Չեխովի, Արփիար Արփիարյանի, Նար-Դոսի, Ստեփան Չորյանի ստեղծագործությունները: Չաբուղոնը համանուն նորավեպի հերոսն է. հույն երիտասարդ, որ իր արհեստը վերածել էր արվեստի: « Հիմա արվեստասերի մը պես կապրեր, գողանալով, թալլելով շարունակ , ավելի սնապարծութենե, քան թե իրական չարութենե մղված: Կը բավեր, որ իր ճարտարության փորձը տար ամենեն անմատչելի կարծված տուները կողոպտելով , ու հոժարությամբ ետ պիտի տար գողոնը, թե որ բռնվելու վախը չըլլար»:

2.Թումանյանի մասին կան գրեթե մեկ տասնյակի հասնող շրջասույթներ՝ « հմուտ, հանճարեղ լռեցի», «անհաս Արարատը մեր նոր քերթության», « հայոց Պուշկին», « մեծ լռեցի», «ժողովրդի ազնիվ կենսագիր», «ամենայն հայոց բանաստեղծ»:

Այս երկտողի հեղինակը Եղիշե Չարենցն է:

Թումանյանի ստեղծագործության թեմատիկան, հայրենիքի գեղարվեստական պատմության նյութը՝ քաղված մեր հազարամյա հոգևոր գանձերից, անկոտրում հավատից, նրան դարձրել են անմրցելի հայ գրականության անդաստանում: Հայրենիքի վերածննդի գաղափարը Թումանյանը հաստատում է «Հայրենիքիս հետ» բանաստեղծությամբ:

...ՈՒ պոետներ, որ չեն պղծել իրենց շուրթերն անեծքով,
Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով...

3.Իհարկե, կան բազմաթիվ հեղինակներ, որ իրենց ստեղծագործություններում անդրադարձել են լավ գործի անմահության գաղափարին, սակայն այդ շարքում շահեկանորեն առանձնանում են Հովհաննես Թումանյանը և Ավետիք Իսահակյանը: Հովհաննես Թումանյան «Թ-մբկաբերդի առումը» (պոեմ)

Անց ենք կենում ... միայն անմահ

Գործն է խոսվում լավ ու վատ.

Ա՛խ երանի՝ ո՛վ մարդ կգա

ՈՒ մարդ կերթա անարատ:

Ավետիք Իսահակյան «Համբերանքի չիբուխը» (պատմվածք)

«Մարդը գնացական է, նրա լավ գործը՝ մնացական: Ա՛յ , խոսքի օրինակ , էս շաքարը գցեցի չայի մեջ՝ հալավ, կորավ, չկա, բայց չայն անուշացավ: Էնպես էլ լավ մարդը կմեռնի, բայց նրա լավ գործը աշխարհը կանուշացնե, թե չէ առանց լավ մարդու աշխարհը շա՛տ դառն է՝ օձի լեղի...»

4.« Պարը» բանաստեղծության հեղինակը Միամանթոն է (Ատոմ Յարճանյան):

Բանաստեղծությունը ամփոփված է «Կարմիր լուրեր բարեկամես» ժողովածուում: «Ո՛վ մարդկային արդարություն, թո՛ղ ես թքնեմ քո ճակատիդ...»

Իհարկե արդիական է. քանի դեռ աշխարհում խեղաթյուրվում են ճշմարտությունը, զոհվում են անմեղ զինվորներ, սպանվում են անզեն ծերեր, երեխաներ, կանայք, «ուժեղը լափում է թույլին», քանի դեռ չի վերականգնվել պատմական ճշմարտությունը և չի պատժվել մահասփյուռ խուժանը:
Քանի դեռ հայ զինվորը կանգնած է Արցախի սահմանին, քանի դեռ Նոյի առաջին իջևանը կարոտով սպասում է արդարության դատին, միշտ հնչելու է «նոր դարերի մարգարեի», « նոր շրջանի Նարեկացու», « առնական խիզախության փողհարի» արդար ձայնը:

5.Անդաստան – հանդ, դաշտ

« Անդաստան» անդաստանի և առհասարակ ցանքսերի՝ պարտեզների, այգիների, արտերի օրհնություն: Հայ եկեղեցին Անդաստան է կատարում եկեղեցական գրեթե բոլոր տոներից առաջ: Ամենամեծ Անդաստանը կատարվում է Խաչվերացին: Հնում երկրագործների հանար սովորություն էր արտի օրհնություն կատարելը: Մեծամասամբ երկրագործ մեր ժողովրդի համար այս սովորությունը մեծ նշանակություն է ունեցել: Հետագայում որոշ փոփոխությունների ենթարկվելով՝ այն դարձել է եկեղեցու անբաժան արարողություններից մեկը:
Բանաստեղծության հեղինակը Դանիել Վարուժանն է. այն ամփոփված է « Հացին երգը» ժողովածուի մեջ, որը լույս է տեսել 1921-ին, հետմահու՝ բանաստեղծի ընկերների և բարեկամների ջանքերով:
Հեղինակի անբեկանելի ցանկությունը խաղաղ կյանքի հաղթանակն է, բերրիության, առատության, պտղաբերման և սիրերգության օրհնաբանումը: